ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություն կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների և կենցաղային սառնարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառը և կատարված փոփոխության համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ՝ 2021 թվականի նոյեմբերի 26-ին eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ նաև Համակարգ) միջոցով հրապարակված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով՝ Համակարգի «Տեխնիկական բնութագիր» դաշտի համապատասխան վանդակներում լրացվել են նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը, սակայն, eauction.armeps.am համակարգի տեխնիկական առանձնահատկություններով պայմանավորված, տեխնիկական բնութագրերում առկա **«-15^{0}C»** պարամետրը Համակարգում հրապարակվել է որպես **«-150C»**:

Փոփոխության նկարագրություն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում **«-15^{0}C»** պարամետրը փոխարինվել է **«-15 աստիճան ցելսիուս»** բառերով:

Փոփոխության հիմնավորում՝ փոփոխությունը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: